**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ**

**6-16.29.01 «ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԿԱՀՈՒՅՔԻ ԶԱՐԴԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ- 2013**

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**

**ՏՆՕՐԵՆ**

____________________
(ազգանուն, անուն)

«___»_________________201- թ.

_________________________________________
Ուսումնական հաստատության անվանումը

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«ՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԿԱՀՈՒՅՔԻ ԶԱՐԴԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ»ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 6-16.29.01 «ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՝ «Պատրաստող՝կահույքի զարդային տարրերի»

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ լրիվ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 տարի

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | սեպտեմբեր | | | | 27.09-5.10 | հոկտեմ | | | 27.10-2.11 | նոյեմբեր | | | | դեկտեմբեր | | | | 29.12-4.01 | հունվ. | | | 26.01-1.02 | փետրվ | | | 23.02-1.03 | մարտ | | | | 30.03-5.04 | ապրիլ | | | 27.04-3.05 | մայիս | | | | հունիս | | | | 29.06-5.07 | հուլիս | | | 27.07-2.08 | օգոստոս | | | | II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1-7 | 8-14 | 15-21 | 22-28 | | 6-12 | 13-19 | 20-26 | | 3-9 | 10-16 | 17-23 | 24-30 | 1-7 | 8-14 | 15-21 | 22-28 | | 5-11 | 12-18 | 19-25 | | 2-8 | 9-15 | 16-22 | | 2-8 | 9-15 | 16-22 | 23-29 | | 6-12 | 13-19 | 20-26 | | 4-10 | 11-17 | 18-24 | 25-31 | 1-7 | 8-14 | 15-21 | 22-28 | | 6-12 | 13-19 | 20-26 | | 3-9 | 10-16 | 17-23 | 24-31 | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Ամփոփիչ պետական ատեստավորման նախապ. | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ/տոն | Ընդամենը |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | ◊ | = | = | | | | | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | : | X | X | I | = | = | = | = | = | = | = | = | 32 | 1 | 8 | | 1 | 10 | 52 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 32 | 1 | 8 | | 1 | 10 | 52 |

| | ◊ | X | : | I | = |
|---|---|---|---|---|---|
| Տեսական ուսուցում | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | Նախաավարտական արտադրական պրակտիկա | Մոդուլների ամփոփում | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ, Ամանոր և Սուրբ ծնունդ |

# II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների | | | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ) | | | | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Քննություն | Ստուգարք | Կուրսային աշխատանք | Պարտադիր լսարանային բեռնվածություն | | | | 1-ին կուրս | | 2- րդ կուրս | | 3-րդ կուրս | |
| | | | | | Ընդա-մենը | Այդ թվում Տեսակ. ուսուց. | Լաբոր. և գործն. աշխ | Սեմինար պարապ-մունք | 1-ին կիս շաբ | 2-րդ կիս շաբ | 3-րդ կիս. շաբ | 4-րդ կիս. շաբ. | 5-րդ կիս. 16 շաբ. | 6-րդ կիս. 16 շաբ. |
| **1.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1.1 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 5, 6 | | 72 | 54 | 18 | | | | | | 36 | 36 |
| 1.2 | Լանդշաֆտագիտության և Էկոլոգիայի հիմունքներ | | 5 | | 36 | 22 | 14 | | | | | | 36 | |
| 1.3 | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 6 | | 18 | 14 | | 4 | | | | | | 18 |
| 1.4 | Իրավունքի հիմունքներ | | 5 | | 36 | 30 | | 6 | | | | | 18 | 18 |
| 1.5 | Պատմություն | | 5 | | 36 | 32 | | 4 | | | | | 18 | 18 |
| 1.6 | Օտար լեզու | | 5, 6 | | 60 | 20 | 40 | | | | | | 30 | 30 |
| 1.7 | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 6 | | 18 | 16 | | 2 | | | | | | 18 |
| 1.8 | Ֆիզիկական կուլտուրա | | 5, 6 | | 64 | 8 | 56 | | | | | | 32 | 32 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | ***340*** | **196** | **128** | **16** | | | | | ***170*** | ***170*** |
| **2.** | **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | | | | | | |
| 2.1 | Հաղորդակցման հմտություններ | | 5 | | 36 | 10 | 26 | | | | | | 36 | |
| 2.2 | Անվտանգություն և առաջին օգնություն | | 5 | | 36 | 12 | 24 | | | | | | 36 | |
| 2.4 | Համակարգչային օպերատորության | | 5 | | 36 | 10 | 26 | | | | | | 36 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | ***108*** | ***32*** | ***76*** | | | | | | ***108*** | |
| **4.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 4.1 | Նյութագիտության հիմունքներ ( ծառատեսակներ եվ փայտանյութեր) | | 5 | | 36 | 12 | 24 | | | | | | 36 | |
| 4.2 | Ճարտարագիտական գրաֆիկայի և շինարարական | | 5 | | 24 | 6 | 18 | | | | | | 24 | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գծագրության տարրերի պատկերում | | | | | | | | | | | | | |
| 4.3 | Թույլտվածքներ եվ նստեցվածքներ: Չափիչ- չափանշման գործիքներ: Չափումներ կատարելու ունակություն, հավաքման գործընթացի իրականացում | | 6 | | 24 | 8 | 16 | | | | | | | 24 |
| 4.4 | Նկարչություն, կոմպոզիցիա, էսքիզ, ձևանմուշ | | 5 | | 36 | 4 | 32 | | | | | | 36 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | ***120*** | ***30*** | ***90*** | | | | | | ***96*** | **24** |
| **5.** | **ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 5.1 | Ձեռքի աշխատանքային գործիքներով աշխատանքների կատարում | 6 | | | 90 | 18 | 72 | | | | | | 90 | |
| 5.2 | Փայտամշակման հաստոցներով աշխատանքների կատարում | | 6 | | 54 | 20 | 34 | | | | | | 18 | 36 |
| 5.3 | Փայտանյութի նախապատրաստվածքի հարթեցման և հատման աշխատանքներ, հարթ դետալների պատրաստում | | 6 | | 36 | 6 | 30 | | | | | | | 36 |
| 5.4 | Պլաստիկ (օվալային և ձևավոր) դետալների պատրաստում | | 6 | | 90 | 16 | 74 | | | | | | 40 | 50 |
| 5.5 | Կանոնավոր երկրաչափական դետալների պատրաստում | | 6 | | 54 | 6 | 48 | | | | | | | 54 |
| 5.6 | Աբստրակտ դետալների պատրաստում | | 6 | | 54 | 8 | 46 | | | | | | | 54 |
| 5.7 | Ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստման հմտություններ | 6 | | | 54 | 8 | 46 | | | | | | 54 | |
| 5.8 | Միջանցիկ փորագրությամբ դետալների պատրաստման հմտություններ | 6 | | | 54 | 8 | 46 | | | | | | | 54 |
| 5.9 | Երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստում | 6 | | | 54 | 10 | 44 | | | | | | | 54 |
| 5.10 | Սինթետիկ նյութերից պատրաստված դետալների վրա փորագրման աշխատանքների կատարում | | 6 | | 18 | 8 | 10 | | | | | | | 18 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **558** | ***108*** | ***450*** | | | | | | ***202*** | ***356*** |
| **6.** | **ԸՆՏՐՈՎԻ** | | | | 18 | | | | | | | | | 18 |
| | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ** | | | | 8 | | | | | | | | | 8 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | ***1152*** | ***366*** | **744** | **16** | | | | | ***576*** | ***576*** |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | 100 | | | | | | | | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | | | | | 36 | 36 |

| | **IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ** | | | N | **VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ** |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գեղանկարչություն | | | | **ԿԱԲԻՆԵՏՆԵՐ** |
| 2 | | | | 1 | Ընդհանուր հումանիտար,սոցիալ-տնտեսագիտական և բնագիտական առարկաների, |
| 3 | | | | 2 | Փայտամշակման տեխնոլոգիայի և սարքավորումների |
| 4 | | | | 3 | Համակարգչային |
| | | | | 4 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների |
| | **V. ՊՐԱԿՏԻԿԱ** | Կիսամյակ | Շաբաթ | 5 | Օտար լեզվի |
| 1 | Ուսումնական պրակտիկա<br>առանց տեսական ուսուցման | 5, 6 | 6 | 6 | |
| 2 | Նախաավարտական արտադրական պրակտիկա | 6 | 2 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | |
| **VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ**<br>Հունիսի 29-ից - հուլիսի 5-ը<br>Համալիր պետական քննություն՝ հատուկ մասնագիտական մոդուլներից | | | | | **ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ** |
| | | | | 1 | Փայտանյութերի հետազոտման և փորձարկման |
| | | | | | **ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ** |
| | | | | 1 | Փայտամշակման |
| | | | | | **ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ** |
| | | | | 1 | Մարզադահլիճ |
| | | | | 2 | Մարզահրապարակ |

## III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-Հ-3-13-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողություն: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ<br>տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 26 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար,<br>2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը,<br>3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը,<br>4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում,<br>5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,<br>2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,<br>3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, |

| | |
|---|---|
| | 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,<br>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ<br>գործնական պարապմունք 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,<br>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,<br>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,<br>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ,<br>5) ակտիվորեն մասնակցում է մասնագիտական դեբատներին և բանավեճերին, հանդես է գալիս քննարկվող թեմայի շուրջ խելամիտ առաջարկներով, պահպանում է հաղորդակցման էթիկայի նորմերը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս |

| | |
|---|---|
| | հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ<br>գործնական պարապմունք 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,<br>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,<br>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,<br>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,<br>5) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,<br>6) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, |

| | |
|---|---|
| | թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ<br>գործնական պարապմունք 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում |
| **Կատարման չափանիշներ** | 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ,<br>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,<br>3) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,<br>4) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,<br>5) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ |

| | |
|---|---|
| **ռեսուրսները** | մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ,<br>գործնական պարապմունք 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 5** | Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական գործընկերության համար |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),<br>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,<br>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,<br>4) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ,<br>գործնական պարապմունք 6 ժամ |

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»**

| | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-ԱԱՕ-3-13-001 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ<br>տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 24 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները,<br>2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան,<br>3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ,<br>4. ցուցաբերի առաջին օգնություն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,<br>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,<br>3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,<br>4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,<br>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,<br>6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները: |

| | |
|---|---|
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չպահպանելու դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի,<br>տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,<br>հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,<br>էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:<br>կենցաղային հիմանական սարքերի անվտանգության կանոնները:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),<br>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառայգայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), |

| | |
|---|---|
| | 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,<br>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:<br>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,<br>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,<br>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,<br>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար |

| | |
|---|---|
| | սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ցուցաբերել առաջին օգնություն |
| **Կատարման չափանիշներ** | 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,<br>2) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,<br>3) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,<br>4) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,<br>5) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,<br>6) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: |

| | |
|---|---|
| | Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 4 ժամ<br>գործնական պարապմունք 8 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-ԱԳՀ-3-13-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ<br>տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 26 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. տիրապետի համակարգչային տեխնիկային,<br>2. խմբագրի և ֆորմատավորի տեքստերը,<br>3. պատրաստի և խմբագրի աղյուսակները,<br>4. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով,<br>5. աշխատի համացանցում: |

| | |
|---|---|
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Համակարգչային տեխնիկայի տիրապետում |
| **Կատարման չափանիշներ** | 1) տիրապետում է համակարգչի հիմնական բաղադրիչներին,<br>2) տիրապետում է համակարգիչը միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պահանջներին, աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,<br>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, պատճենման սարք և այլն),<br>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,<br>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),<br>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,<br>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,<br>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,<br>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print): |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակրգչի հիմանական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային |

| | |
|---|---|
| | օժանդակ տեխնիկական սարքեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ<br>գործնական պարապմունք 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում |
| **Կատարման չափանիշներ** | 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվուներով տեքստ մուտքագրելու համար,<br>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,<br>3) կարողանում է տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,<br>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,<br>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ<br>գործնական պարապմունք 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Աղյուսակների պատրաստում և խմբագրում |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք,<br>2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,<br>3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն),<br>4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, |

| | |
|---|---|
| | 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 2 ժամ<br>գործնական պարապմունք 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,<br>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,<br>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,<br>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,<br>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: |

| | |
|---|---|
| | Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 6 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 5** | Համացանցում աշխատելու իմացություն |
| **Կատարման չափանիշներ** | 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը,<br>2) օգտագործում է համացանցային հիմնական ծրագրերը,<br>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,<br>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),<br>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,<br>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, համացանցային ծրագրերում և այլ կայքերում,<br>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ): |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և |

| | |
|---|---|
| | ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ( ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԵՐ)»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել արտաքին տեսքով, փայտանյութի հիմնական հատկություններով ու կտրվածքներով ծառատեսակները որոշելու, արատները տարբերակելու ունակություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել հյուսնային իրերի և կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ<br>տեսական ուսուցում՝ 12 ժամ<br>գործնական աշխատանք՝ 24 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ չեն պահանջվում: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. ներկայացնի ծառի կառուցվածքը, ծառերի դասակարգումը և կիրառման բնագավառները, կարողանա որոշի ծառատեսակներն ըստ արտաքին տեսքի,<br>2. Ներկայացնի փայտանյութի տեսակները, դասակարգումը, կտրվածքները: Ըստ հիմնական կտրվածքների բացատրի փայտանյութի կառուցվածքը, ըստ տեքստուրայի որոշի ծառատեսակը,<br>3. ներկայացնի փայտանյութի հիմնական ֆիզիկական, մեխանիկական, քիմիական, տեխնոլոգիական հատկությունները, կիրառման բնագավառները,<br>4. ներկայացնի փայտանյութի սնկային և կենսաբանական արատները,<br>5. բացատրի փայտանյութի գոգավորության, այլ ձևախախտումների արատները և փայտանյութի որակի վրա դրանց |

| | |
|---|---|
| | ազդեցությունը, կատարել գոգավորության և այլ արատների չափումներ,<br>6. պարզաբանի փայտանյութի մթնոլորտային չորացումից, փտումից և միջատների քայքայումից պաշտպանության միջոցները, ինչպես նաև այրումից պաշտպանելու միջոցները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ծառի կառուցվածքը, ծառերի դասակարգումը և կիրառման բնագավառները, կարողանալ որոշել ծառատեսակներն ըստ արտաքին տեսքի |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բացատրում ծառի կառուցվածքը,<br>2) ճիշտ է որոշում ծառատեսակն ըստ արտաքին տեսքի,<br>3) ճիշտ է մեկնաբանում ծառերի դասակարգումը՝ փշատերև և սաղարթավոր, նշում է օգտագործման բնագավառները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է բացատրել ծառի կառուցվածքը, ծառերի դասակարգումը, որոշել ծառատեսակն ըստ արտաքին տեսքի և նշել կիրառման բնագավառները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Որպես ռեսուրս անհրաժեշտ է տրամադրել մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեսանյութեր, տարբեր ծառատեսակների նմուշներ հատվածքների տեսքով: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Ներկայացնել փայտանյութի տեսակները, դասակարգումը, կտրվածքները: Ըստ հիմնական կտրվածքների բացատրել փայտանյութի կառուցվածքը, ըստ տեքստուրայի որոշել ծառատեսակը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է մեկնաբանում ծառաբնի հիմնական կտրվածքները,<br>2) ըստ հիմնական կտրվածքների ճիշտ է պարզաբանում փայտանյութի կառուցվածքը՝ բնափայտի շերտ (սպիտկեն), |

| | |
|---|---|
| | միջուկ, տարիքային շերտ, ծուծային ճառագայթներ, ծուծային կրկնողություն, հաղորդակցող անոթներ, խեժային ուղիներ,<br>3) ճիշտ է որոշում ծառատեսակները ըստ հիմնական կտրվածքների,<br>4) ճիշտ է մեկնաբանում փայտանյութի դասակարգումը և տեսակները՝ հասուն փայտանյութ, միջուկավոր, անմիջուկ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է ներկայացնել փայտանյութի տեսակները, կտրվածքները, դասակարգումը և ըստ հիմնական կտրվածքների բացատրել փայտանյութի կառուցվածքը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեսանյութեր, տարբեր ծառատեսակների հիմնական կտրվածքների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Ներկայացնել փայտանյութի հիմնական ֆիզիկական, մեխանիկական, քիմիական, տեխնոլոգիական հատկությունները, կիրառման բնագավառները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում փայտանյութի ֆիզիկական և քիմիական հատկությունները՝ արտաքին տեսք, փայլ, կազմվածք, հոտ, խոնավություն, խտություն, ջերմահաղորդականություն, ձայնահաղորդականություն,<br>2) ճիշտ է բացատրում հատկությունների փոփոխություն առաջացնող միջոցների կիրառման եղանակները,<br>3)ճիշտ է մեկնաբանում փայտանյութի մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները՝ ամրություն, ձևափոխելիություն, մետաղական միացումների հանդեպ դիմադրություն, ճեղքելիություն, ճկունություն, մաշակայունություն,<br>4) ճիշտ է մեկնաբանում ոստերի, ճաքերի, բնի ձևի ու կառուցվածքային այլ արատների տեսակները և փայտանյութի որակի վրա դրանց ազդեցությունը,<br>5) ճիշտ է կատարում ոստերի, ճաքերի, բնի ձևի և կառուցվածքային այլ արատների չափումները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է ներկայացնել փայտանյութի հիմնական ֆիզիկամեխանիկական, քիմիական, |

| | |
|---|---|
| | տեխնոլոգիական հատկությունները և կիրառման եղանակները:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Փայտանյութի ֆիզիկամեխանիկական և քիմիական հատկությունները: Կառուցվածքային (ոստերի, ճաքերի, բնի ձևի) և այլ արատների չափումներ:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեսանյութեր, տարբեր փայտանյութերի կտրվածքների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ներկայացնել փայտանյութի սնկային և կենսաբանական արատները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է մեկնաբանում սնկային ու կենսաբանական արատները,<br>2) ճիշտ է պարզաբանում սնկային ու կենսաբանական արատների տեսակները,<br>3) ճիշտ է ներկայացնում փայտանյութի որակի վրա սնկային և կենսաբանական արատների ազդեցությունը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի րի միջոցով: Ուսանողին առաջադրվում է ներկայացնել փայտանյութի սնկային և կենսաբանական արատները:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Սնկային ու կենսաբանական արատները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեսանյութեր, տարբեր փայտանյութերի կտրվածքների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք 4 ժամ |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 5** | Բացատրել փայտանյութի գոգավորության, այլ ձևախախտումների արատները և փայտանյութի որակի վրա դրանց ազդեցությունը, կատարել գոգավորության և այլ արատների չափումներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է մեկնաբանում փայտանյութի, գոգավորության, մեխանիկական մշակման և այլ արատների սահմանումը,<br>2) ճիշտ է ներկայացնում փայտանյութի, գոգավորության, մեխանիկական մշակման և այլ արատների տեսակները,<br>3) ճիշտ է մեկնաբանում նշված արատների ազդեցությունը փայտանյութի որակի վրա,<br>4) ճիշտ է կատարում գոգավորության արատների չափումները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է բացատրել գոգավորության և այլ ձևախախտումների ազդեցությունը փայտանյութի որակի վրա, կատարել գոգավորության և այլ արատների չափումները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեսանյութեր, տարբեր փայտանյութերի նմուշներ, չափող գործիքներ և հարմարանքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 6** | Պարզաբանել փայտանյութի մթնոլորտային չորացումից, փտումից և միջատների քայքայումից պաշտպանության միջոցները, ինչպես նաև այրումից պաշտպանելու միջոցները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է մեկնաբանում փայտանյութերի մթնոլորտային չորացման եղանակի թերությունները և առավելությունները, առկա վտանգները, օրինակ՝ միջատներով վնասվելը և փտուկով վարակվելը,<br>տեղյակ է արհեստական չորացման եղանակներին, որոնք զերծ են մթնոլորտային չորացմանը բնորոշ թերություններից, և առաջարկում է , օրինակ՝ խցային չորացման եղանակը,<br>2) ճիշտ է պարզաբանում փայտանյութի փտումը կանխիչ միջոցառումները,<br>3) ծանոթ է փայտանյութի պաշտպանության հականեխիչ և հրապաշտպանիչ միջոցներին և առաջարկում է դրանց |

| | |
|---|---|
| | կիրառման եղանակները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին առաջադրվում է ներկայացնել մթնոլորտային չորացման հետևանքով առաջացած արատներից, փտումից և միջատների քայքայումից պաշտպանության միջոցները, ինչպես նաև ներկայացնել հակահրդեհային միջոցները:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Փայտանյութերի մթնոլորտային չորացման եղանակի առավելությունները և թերությունները, չորացման այլընտրանքային եղանակները, փայտանյութի փտումը կանխարգելող, հականեխիչ և հրապաշտպան միջոցները և դրանց կիրառման եղանակները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեսանյութեր, տարբեր փայտանյութերի նմուշներ, պաշտպանիչ, կանխարգելիչ միջոցների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱՅԻ ԵՎ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄ»

| | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՍՇՏ-3-13-002 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել մասնագիտական աշխատանքային գծագրեր կարդալու ունակություններ, ինչպես նաև տիպային հանգույցների ու դետալների էսքիզներ և աշխատանքային գծագրեր կատարելու կարողություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 24 ժամ<br>տեսական ուսուցում՝ 6 ժամ<br>գործնական աշխատանք՝ 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. կատարի երկրաչափական կառուցումներ, տիպային դետալների հորիզոնական, ֆրոնտալ ( ճակատային) և պրոֆիլ (կողային) պրոյեկցիաներ երեք հարթությունների վրա, կառուցի տարածական (աքսիոնոմետրիկ) պատկերներ, ցույց տա կտրվածքներ,<br>2. կատարի աշխատանքային գծագրերը, մեկնաբանի մասշտաբները, տեխնիկական պայմանները և պայմանական նշանները,<br>3. կարդա ճարտարագիտական գծագրերը, մեկնաբանի հավաքական գծագրերում եղած տիպային փայտե միացությունները, պայմանական նշանները և մասնագրերը, պարզաբանի փայտե զարդանախշերին վերաբերող տեխնիկական պայմանները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Կատարել երկրաչափական կառուցումներ, տիպային դետալների հորիզոնական, ֆրոնտալ (ճակատային) և պրոֆիլ (կողային) պրոյեկցիաներ երեք հարթությունների վրա, կառուցել տարածական (աքսիոնոմետրիկ) պատկերներ, ցույց տալ կտրվածքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ փոխուղղահայաց ուղիղների կառուցում, կորերի լծորդում, եռանկյունների, կանոնավոր բազմանկյունների կառուցում կոորդինատներով և այլն,<br>2) ճիշտ է կատարում տիպային դետալների պրոյեկտումն երեք հարթությունների վրա և պատկերում է դրանց հորիզոնական, ֆրոնտալ ( ճակատային) և պրոֆիլ ( կողային) պրոյեկցիաները,<br>3) ճիշտ է կառուցում տիպային դետալների տարածական (աքսիոնոմետրիկ) պատկերները,<br>4) ճիշտ է ցույց տալիս կտրվածքները և կատարում է առաջադրված դետալների էսքիզները,<br>5) էսքիզների և գծագրերի վրա ճիշտ է տեղադրում չափերը, նշում տեխնիկական պայմանները,<br>6) ճիշտ է կառուցում բնօրինակից տիպային դետալների համապատասխան էսքիզները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել տիպային դետալների հորիզոնական, ֆրոնտալ և պրոֆիլ պրոյեկցիաներ, կառուցել տարածական |

| | |
|---|---|
| | (աքսիոնոմետրիկ) պատկերներ: Կատարել երկրաչափական կառուցումներ հարթության վրա, կառուցել պրոյեկցիաներ երեք հարթությունների վրա և աքսիոնոմետրիկ պատկերներ: Պրոյեկցիաների և տարածական պատկերների վրա ցույց տալ կտրվածքներ, կատարել էսքիզներ և գծագրեր՝ չափերի տեղադրմամբ և տեխնիկական պայմանների առաջադրմամբ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան դասագրքեր, գծագրական գործիքներ և պարագաներ, փայտե տիպային դետալների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել աշխատանքային գծագրերը, մեկնաբանել մասշտաբները, տեխնիկական պայմանները և պայմանական նշանները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է պատկերացնում մասշտաբը, ճիշտ է բացատրում պայմանական նշանները,<br>2) ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերում նշված թույլտվածքները և մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության դասերի նշումները,<br>3) ճիշտ է մեկնաբանում դետալների մակերևույթների ձևի թույլատրելի շեղումների առաջացման պատճառները,<br>4) ճիշտ է պարզաբանում աշխատանքային գծագրերում ներկայացված տեխնիկական պայմանները,<br>5) ճիշտ է բացատրում աշխատանքային գծագրերում կամ էսքիզներում պատկերված բութակների, առվակների, երեսակների, փորակների անհրաժեշտությունն ու նշանակությունը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է կատարել աշխատանքային գծագրեր, մեկնաբանել մասշտաբները:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Դետալների մակերևույթների ձևի շեղումներ, էսքիզների կամ աշխատանքային գծագրերի վրա պատկերված բութակների, առվակների, երեսակների և այլ էլեմենտների նշանակությունն ու անհրաժեշտությունը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ |

| | |
|---|---|
| | ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ գծագրական գործիքներ, պարագաններ, փայտե տիպային դետալների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 8 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կարդալ ճարտարագիտական գծագրերը, մեկնաբանել հավաքական գծագրերում եղած տիպային փայտե միացությունները, պայմանական նշանները և մասնագրերը, պարզաբանել փայտե զարդանախշերին վերաբերող տեխնիկական պայմանները: |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կարդում ճարտարագիտական գծագրերը, բացատրում մասշտաբները,<br>2) ճիշտ է տարբերակում ճարտարագիտական գծագրերում փայտե կառուցվածքների հավաքական գծագրերը, ներկայացնում է հավաքական գծագրերում բերված տիպային միացությունները,<br>3) ճիշտ է բացատրում ճարտարագիտական գծագրերում առկա պայմանական նշանները և մասնագրերը,<br>4) ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրերում ներկայացված զարդանախշերին վերաբերող տեխնիկական պայմանները,<br>5) ճիշտ է կառուցում փայտե կառուցվածքների էսքիզները և կատարում է աշխատանքային գծագրերը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է կարդալ ճարտարագիտական գծագրերը մեկնաբանել այդ գծագրերում առկա տիպային փայտե միացությունները, պայմանական նշանները և մասնագրերը, պարզաբանել տեխնիկական պայմանների՝ փայտե զարդանախշերին վերաբերող մասը:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Ճարտարագիտական գծագրերը, էսքիզներ և աշխատանքային գծագրեր:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ ճարտարագիտական տարբեր գծագրեր, գծագրական գործիքներ և պարագաններ: |

| | |
|---|---|
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 6 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹՈՒՅԼՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՍՏԵՑՎԱԾՔՆԵՐ: ՉԱՓԻՉ- ՉԱՓԱՆՇՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ: ՉԱՓՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՍՇՏ-3-13-003 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել թույլտվածքի, թույլտվածքի դաշտի մասին պատկերացում, նստեցվածքների տիպերի իմացություն, չափիչ գործիքներով թույլտվածքների, նստեցվածքների, անհարթություններ չափումներ կատարելու ունակություն:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել  կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 24 ժամ<br>տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 16 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՍՇՏ-3-13-002 «Ճարտարագիտական գրաֆիկայի և գծագրության տարրերի պատկերման ունակություն» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. պարզաբանի դետալների չափերի թույլտվածքների, հանգուցամասերի նստեցվածքների համակարգը, պարզաբանի ճշգրտության դասերի պայմանական նշանները,<br>2. ներկայացնի փայտանյութի մակերևույթի մշակման անհարթությունները, պարզաբանել մակերևույթի մաքրության դասերի պայմանական նշանակումները,<br>3. կատարի չափումներ, չափանշումներ, ստուգումներ չափման և չափանշման գործիքներով,<br>4. հավաքի փայտե դետալներից հանգույցներ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |

| | |
|---|---|
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Պարզաբանել դետալների չափերի թույլտվածքների, հանգուցամասերի նստեցվածքների համակարգը, պարզաբանել ճշգրտության դասերի պայմանական նշանները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է պատկերացնում և մեկնաբանում թույլտվածքը և նստեցվածքը, բացակը և ձգվածքը,<br>2) ճիշտ է պարզաբանում դետալների մշակման ճշգրտությունը կանխորոշող պայմանները,<br>3) ճիշտ է մեկնաբանում մշակվող դետալների մակերևույթի մաքրությունը և որակին վերաբերող հիմնական տեխնիկական պահանջները,<br>4) ճիշտ  է մեկնաբանում տիպային դետալների համափոխարինելիության սկզբունքը,<br>5) ճիշտ է պատկերացնում թույլտվածքի դաշտը և ճիշտ է մեկնաբանում դետալների նոմինալ, սահմանային և իրական չափերը,<br>6) ճիշտ է հաշվարկում թույլտվածքը, բացակը, ձգվածքը ըստ տեխնիկական պայմանների, ճիշտ է որոշում նստեցվածքը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է պարզաբանել չափերի թույլտվածքների, հանգուցամասերի նստեցվածքների համակարգը, մեկնաբանել ճշտության դասերի պայմանական նշանները, ինչպես նաև թույլտվածքի, բացակի, ձգվածքի հաշվարկում և նստեցվածքի տիպի որոշում:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը  հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական  հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Որպես ռեսուրս անհրաժեշտ է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, չափող սարքեր, տիպային դետալների և հավաքական հանգույցների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Ներկայացնել փայտանյութի մակերևույթի մշակման անհարթությունները, պարզաբանել մակերևույթի մաքրության դասերի պայմանական նշանակումները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է մեկնաբանում անհարթությունների առաջացման պատճառները, պարզաբանում է անհարթությունների |

| | |
|---|---|
| | բնութագրերը, տեսակները և պարամետրերը,<br>2) ճիշտ է մեկնաբանում անհարթությունների գնահատման համեմատական եղանակը,<br>3) ճիշտ է պարզաբանում անհարթությունների դասերի պայմանական նշանակումները և դրանք պատկերում է աշխատանքային գծագրերում: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին առաջադրվում է ներկայացնել փայտանյութի մակերևույթի մշակման անհարթությունները, պարզաբանել մակերևույթների մշակման մաքրության դասերը և դրանց պայմանական նշանները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Որպես ռեսուրս անհրաժեշտ է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, չափիչ գործիքներ, գծագրական պարագաներ փայտե տիպային դետալների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կատարել չափումներ, չափանշումներ, ստուգումներ չափման և չափանշման գործիքներով |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է մեկնաբանում չափման գործընթացը, տեղյակ է կիրառվող ժամանակակից չափման միջոցներին և կարողանում է դրանցից օգտվել,<br>2) ճիշտ է պարզաբանում հիմնական չափիչ ու չափանշման գործիքները՝ չափերիզ, պահեստային մետր, քանոն, խազքաշ, անկյունաքանոն, կենտրոնափնտրիչ-անկյունաքանոն, անկյունացույց, չափակարկին, ներսաչափ, խորաչափ, հարթաչափ, ուղղալարով հարթաչափ և այլն, դրանց նշանակությունը, կառուցվածքը և կիրառման կանոնները,<br>3) ճիշտ է օգտվում հիմնական չափանշման գործիքներից և կատարում է չափանշումներ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել չափումներ, ստուգումներ, չափանշումներ՝ չափման և չափանշման գործիքներով:<br>Ուսանողին առաջադրվում է մեկնաբանել Ժամանակակից չափման միջոցների օգնությամբ չափման գործընթացները, պարզաբանել հիմնական չափիչ ու չափանշման գործիքների կառուցվածքը և օգտագործման կանոնները: Կատարել |

| | |
|---|---|
| | չափանշման գործընթաց՝ օգտվելով չափանշման հիմնական գործիքներից:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Որպես ռեսուրս անհրաժեշտ է ունենալ չափիչ և չափանշման գործիքների հավաքածու, փայտանյութի նախապատրաստվածք և տիպային դետալների նմուշներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Հավաքել փայտե դետալներից հանգույցներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում հանգույցի հավաքումը՝ պահպանելով տեխնոլոգիական քայլերի ճիշտ հերթականությունը,<br>2) ճիշտ է կատարում հանգույցի հավաքման ժամանակ գծագրերով տրված նստեցվածքները, ապահովում է նախատեսված բացակները,<br>3) ճիշտ է կատարում չափաբերման, կարգաբերման աշխատանքները, պահպանելով գծագրերում տրված տեխնիկական պայմանները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է հավաքել փայտե դետալներից հանգույցեր, կատարել չափաբերման և կարգաբերման գործընթացներ՝ պահպանելով աշխատանքային գծագրում տրված տեխնիկական պայմանները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակները:<br>Որպես ռեսուրս անհրաժեշտ է ունենալ հանգույցի դետալների հավաքածուն, աշխատանքային գծագրերը, հավաքման, կարգաբերման, չափաբերման գործիքներ և հարմարանքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | գործնական պարապմունք՝ 4 ժամ |

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՊՈԶԻՑԻԱ, ԷՍՔԻԶ, ՁԵՎԱՆՄՈՒՇ»**

| | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-004 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ձևավորել սովորողի մոտ նկարչության, էսքիզավորման, ձևանմուշներ պատրաստելու կարողություններ, ինչպես նաև կոմպոզիցիայի և գունային սպեկտորի կառուցման կարողություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ<br>տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական աշխատանք՝ 32 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1.կատարի երկրաչափական, պլաստիկ, բուսական, կենդանական, սիմետրիկ և ասիմետրիկ կոմպոզիցիաներ: Կատարի էսքիզներ, պատրաստի ձևանմուշներ,<br>2.կատարի գծանկար, հեռանկար, գունանկար, կառուցի գունային սպեկտոր, կառուցի եռաչափ տարածական կոմպոզիցիա: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Կատարել երկրաչափական, պլաստիկ, բուսական, կենդանական, սիմետրիկ և ասիմետրիկ կոմպոզիցիաներ:<br>Կատարել էսքիզներ, պատրաստել ձևանմուշներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում երկրաչափական, պլաստիկ, բուսական, կենդանական, սիմետրիկ և ասիմետրիկ կոմպոզիցիաները,<br>2) ճիշտ է կատարում էսքիզավորումը՝ համապատասխան նշված կոմպոզիցիաներին,<br>3) ճիշտ է պատրաստում ձևանմուշները՝ համապատասխան էսքիզներին: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է կատարել երկրաչափական, պլաստիկ, բուսական, կենդանական, սիմետրիկ և ասիմետրիկ կոմպոզիցիաներ: Նշված կոմպոզիցիաների էսքիզավորում և էսքիզների հիման վրա ձևանմուշների պատրաստում: |

| | |
|---|---|
| | Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Անհրաժեշտ է ունենալ նկարչական և գծագրական պարագաններ, մշակման համապատասխան գործիքներ, չափիչ և չափանշող գործիքներ, ելքային նյութեր և նախապատրաստվածքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 16 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել գծանկար, հեռանկար, գունանկար, կառուցել գունային սպեկտոր, կառուցել եռաչափ տարածական կոմպոզիցիա |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում գծանկարներ,<br>2) ճիշտ է կառուցում հեռանկարը,<br>2) ճիշտ է կառուցում գունային սպեկտորը,<br>3) ճիշտ է կատարում գունանկարներ,<br>4) ճիշտ է կառուցում եռաչափ տարածական կոմպոզիցիաներ: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է կատարել գծանկար, գունանկար, հեռանկար, կառուցել գունային սպեկտր և եռաչափ կոմպոզիցիա: Կատարել գրաֆիկական և գունավոր պատկերներ, կառուցել գունային սպեկտր և տարածական կոմպոզիցիաներ:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Անհրաժեշտ է ունենալ նկարչական ու գծագրական գործիքներ և պարագաններ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 16 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-005 |

| | |
|---|---|
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու կարողություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 90 ժամ<br>տեսական ուսուցում՝ 18 ժամ<br>գործնական աշխատանք՝ 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՍ-3-13-001 «Նյութագիտություն (ծառատեսակներ, փայտանյութեր)» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1.ներկայացնի ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու համար նախատեսված աշխատատեղը, բնութագրի ըստ նշանակության կատարվող աշխատանքները, կատարի տիպային աշխատանքներ ընդհանուր նշանակության ձեռքի գործիքներով, օգտվի սևեռակ (ֆիքսող) հարմարանքներից,<br>2.բնութագրի ձեռքի հատման և սղոցման գործիքներով կատարվող աշխատանքները, կատարի տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>3.ներկայացնի ձեռքի կտրող գործիքներով կատարվող աշխատանքները, կատարի տիպային աշխատանքներ՝ օգտագործելով սևեռակ հարմարանքներ,<br>4.ներկայացնի ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքները՝ օգտագործելով սևեռակ հարմարանքներ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու համար նախատեսված աշխատատեղը, բնութագրել ըստ նշանակության կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ ընդհանուր նշանակության ձեռքի գործիքներով, օգտվել սևեռակ (ֆիքսող) հարմարանքներից |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է պատկերացնում աշխատատեղի կահավորվածությունը, ներկայացնում է նախատեսված հարմարանքները և |

| | |
|---|---|
| | սարքավորումները՝ դազգահ, գործիքների դարակներ և դարակաշարեր, օդափոխիչ, էլեկտրական վահանակ, հակահրդեհային պարագաներ, պարզաբանում է դրանց կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքը,<br>2) ճիշտ է բնութագրում ձեռքի գործիքներով ըստ նշանակության կատարվող աշխատանքները,<br>3) ճիշտ է մեկնաբանում է սևեռակ հարմարանքների՝ անուրների, սեպադիրների, սեղմակ – պտուտակամամուլների, սեղմակապերի, մամլակների աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը,<br>4) ճիշտ է ներկայացնում մուրճերի և դուրերի տեսակները, կարողանում է դրանցով կատարել տիպային աշխատանքներ՝ այդ ընթացքում օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>5) ճիշտ է կատարում աքցանով, տափակաշուրթով, սեպակերպ և խաչակերպ պտուտակիչներով տիպային աշխատանքներ՝ սևեռակ հարմարանքների կիրառմամբ,<br>6) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է ներկայացնել ձեռքի գործիքներով աշխատելու համար նախատեսված աշխատատեղը, բնութագրել կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ ընդհանուր նշանակության ձեռքի գործիքներով՝ պահպանելով անվտանգության կանոնները::<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Ձեռքի գործիքներով կատարվող աշխատաքներին համապատասխան կահավորվածութուն, էլեկտրասնուցման և օդափոխիչ համակարգերի, հակահրդեհային միջոցների նշանակությունը և կառուցվածքը, սևեռող հարմարանքների դերը, տեսակները: Ընդհանուր նշանակության ձեռքի աշխատանքային գործիքները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, փայտանյութի նախապատրաստվածքներ: |
| **Ուսուցման երաշխավորված** | տեսական ուսուցում՝ 4 ժամ |

| | |
|---|---|
| **ժամաքանակը** | Գործնական պարապմունք՝ 20 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բնութագրել ձեռքի հատման և սղոցման գործիքներով կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բնութագրում ձեռքի հատման գործիքներով կատարվող աշխատանքները, դրանցով կատարում է տիպային աշխատանքներ,<br>2) ճիշտ է բնութագրում սղոցման գործիքներով կատարվող աշխատանքները, ներկայացնում է սղոցման գործիքների տեսակները և պարզաբանում է դրանց կառուցվածքը,<br>3) ճիշտ է կատարում տարբեր տեսակի ձեռնասղոցներով, նրբասղոցով, աղեղասղոցով տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>4) ճիշտ է կատարում ձեռքի էլեկտրասղոցով տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>5) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է բնութագրել ձեռքի հատման և սղոցման գործիքներով արվող աշխատանքները և այդ գործիքներով կատարել տիպային աշխատանքներ՝ պահպանելով անվտանգության կանոնները:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Ձեռքի հատման և սղոցման գործիքներով կատարվող աշխատանքներ, ձեռքի հատման և սղոցման գործիքների տեխնիկական հնարավորությունները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, ուսումնական պլակատներ, տարբեր փայտանյութերի նախապատրաստվածքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական պարապմունք՝ 16 ժամ |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել ձեռքի կտրող գործիքներով կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ՝ օգտագործելով սևեռակ հարմարանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բնութագրում կտրող գործիքներով (տարբեր տեսակի էլեկտրական սղոց, ռանդա) կատարվող աշխատանքները,<br>2) ճիշտ է կատարում տարբեր տեսակի ռանդաներով և սղոցներով տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից.<br>3) ճիշտ է կատարում տարբեր տեսակի դուրերով տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>4) ճիշտ է կատարում տարբեր տեսակի դանակներով տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>5) ճիշտ է կատարում տարբեր տեսակի խարտոցներով տիպային աշխատանքներ՝ օգտվելով սևեռակ հարմարանքներից,<br>6) ճիշտ է կատարում ձեռքի էլեկտրական ռանդայով և սղոցով տիպային աշխատանքներ,<br>7) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է ներկայացնել ձեռքի կտրող գործիքներով կատարվող աշխատանքները և փայտանյութի նմուշների վրա կատարել տիպային աշխատանքներ նշված գործիքներով՝ անվտանգության կանոնների պահպանմամբ: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Ձեռքի կտրող գործիքներով (տարբեր տեսակի էլեկտրական սղոցներ և ռանդաներ, դուրեր, դանակներ, խարտոցներ և այլն) կատարվող աշխատանքներ, ձեռքի կտրող գործիքների տեխնիկական հնարավորությունները, աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Անհրաժեշտ է ունենալ կահավորված արհեստանոց, ուսումնական պլակատներ, տարբեր փայտանյութերի նախապատրաստվածքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 6 ժամ<br>գործնական պարապմունք՝ 20 ժամ |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքները՝ օգտագործելով սևեռակ հարմարանքներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է բնութագրում ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքները, ներկայացնում է ձեռքի գայլիկոնման սարքերի և գործիքների տեսակները,<br>2) ճիշտ է կատարում ձեռքի շաղափիչով՝ տարբեր տիպերի և տրամաչափերի գայլիկոններով տիպային աշխատանքներ, օգտվում է սևեռակ հարմարանքներից,<br>3) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է ներկայացնել ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքները և փայտանյութի նմուշի վրա կատարել տիպային աշխատանքներ նշված գործիքներով՝ անվտանգության կանոնների պահպանմամբ:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքներ, ձեռքի գայլիկոնման սարքերի և գործիքների տեսակները, աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները:<br>Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքը կատարվում է կահավորված արհեստանոցում, որտեղ առկա են փայտանյութի նախապատրաստվածքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 4 ժամ<br>գործնական պարապմունք՝ 16 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-006 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել և զարգացնել փայտամշակման հաստոցներով տիպային դետալներ |

| | |
|---|---|
| | պատրաստելու կարողություններ, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ<br>տեսական ուսուցում՝ 20 ժամ<br>գործնական աշխատանք՝ 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՍՇՏ-3-13-005 «Ձեռքի գործիքներով աշխատանքների կատարում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1.ներկայացնի ընդհանուր գծով փայտամշակման արհեստանոցի կահավորվածության չափանիշները, աշխատատեղերի կազմակերպման սկզբունքը,<br>2.ներկայացնի ընդհանուր գծերով փայտամշակման հաստոցների (սկավառակասղոցային լայնական ու երկայնական սղոցման, ֆուգանման, բութակահանման, գայլիկոնման, փորակման, հղկման և այլն) և դրանց հիմնական հանգույցների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, հիմնական տեխնիկական և շահագործական բնութագրերը<br>3.ներկայացնի փայտամշակման մեջ օգտագործվող նախապատրաստվածքների տեսակները, հիմնական բնութագրերը, կատարել չափումներ<br>4.ներկայացնի փայտամշակման հաստոցներում օգտագործվող կտրիչ, չափիչ և գծանշիչ գործիքների տեխնիկական բնութագրերը, դրանց աշխատանքի սկզբունքը<br>5.բացատրի սկավառակասղոցային լայնական սղոցման հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պատրաստել տիպային դետալներ<br>6.ներկայացնի սկավառակասղոցային երկայնական սղոցման հաստոցը, բացատրի դրա հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պատրաստել տիպային դետալներ,<br>7.ներկայացնի ֆուգանիչ հաստոցը, բացատրել դրա հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պատրաստի տիպային դետալներ, |

| | |
|---|---|
| | 8.ներկայացնի բութակահան հաստոցը, բացատրի դրա հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, կատարել տիպային դետալների վրա բութակահանման աշխատանքներ,<br>9.ներկայացնի գայլիկոնիչ-փորակիչ հաստոցը, բացատրել դրա հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, կատարի տիպային դետալների վրա բութակահանման աշխատանքներ,<br>10.ներկայացնի փայտանյութի հղկման հաստոցները, բացատրի դրանց հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, կատարի տիպային դետալների հղկման գործընթացներ՝ համաձայն աշխատանքային գծագրի և հաստատված տեխնոլոգիայի պահանջների: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ընդհանուր գծով փայտամշակման արհեստանոցի կահավորվածության չափանիշները, աշխատատեղերի կազմակերպման սկզբունքը |
| **Կատարման չափանիշներ** | 1)ճիշտ է ներկայացնում փայտամշակման արհեստանոցի կահավորվածության չափանիշները՝ աշխատեղի ճիշտ դասավորություն, գործիքների և հարմարանքների համար նախատեսված դարակների, դարակակալների, պահարանների առկայություն, ընդհանուր լուսավորության, օդափոխության համակարգերի համար կառավարման վահանակների առկայություն և այլն,<br>2) ճիշտ է ներկայացնում բանվորական աշխատատեղի կազմակերպումը՝ ելնելով հարմարավետության, աշխատանքի բարձր արտադրողականության, բարձր որակի ապահովման սկզբունքներից,<br>3) ճիշտ է ներկայացնում էներգամատակարարման կազմակերպումը, վթարային իրավիճակներում հոսանքազրկման ավտոմատ միջոցների կիրառման անհրաժեշտությունը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է ներկայացնել փայտամշակման արհեստանոցի կահավորվածության չափանիշները և աշխատատեղերի կազմակերպման սկզբունքը:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Փայտամշակման արհեստանոցի կահավորվածություն, բանվորական աշխատատեղի օպտիմալ կազմակերպման |

| | |
|---|---|
| | տեխնիկական նորմատիվները և տեխնոլոգիական գործընթացները, աշխատանքի որակը և բարձր արտադրողականության ապահովման սկզբունքները, էներգասնուցման կազմակերպում, վթարային իրավիճակներում հոսանքազրկման ավտոմատ միջոցները:<br>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Որպես ռեսուրս անհրաժեշտ է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, նորմատիվ – տեխնիկական փաստաթղթեր, նախագծեր և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Ներկայացնել ընդհանուր գծերով փայտամշակման հաստոցների (սկավառակասղոցային լայնական ու երկայնական սղոցման, ֆուգանման, բութակահանման, գայլիկոնման, փորակման, հղկման և այլն) և դրանց հիմնական հանգույցների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, հիմնական տեխնիկական և շահագործական բնութագրերը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում փայտամշակման հաստոցների կառուցվածքը, նշանակությունը և շահագործման կանոնները,<br>2) ճիշտ է նկարագրում հիմնական հանգույցների՝ էլեկտրական շարժաբերի, մեխանիկական շարժաբերի, փոխանցումների տուփի կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքը: Ճիշտ է ներկայացնում բազայավորման- սևեռակման հարմարանքների կառուցվածքը, գործիքների և աշխատանքային սեղանի մատուցման մեխանիզմների կառուցվածքը,<br>3) ճիշտ է ներկայացնում յուղման և հովացման համակարգերի կառուցվածքը և գործողության սկզբունքը,<br>4) ճիշտ է ներկայացնում և պարզաբանում փայտամշակման հաստոցների հիմնական տեխնիկական և շահագործական բնութագրերը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՌԵԼԻԵՖԱՅԻՆ ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-011 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել և զարգացնել փայտից ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստման կարողություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ<br>տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 46 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՄՇՏ-3-13-005 «Ձեռքի գործիքներով աշխատանքների կատարում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1.կատարի ռելիեֆային փորագրությամբ դետալների էսքիզներ: դետալների ռելիեֆային տարրերի նախագծման |

| | |
|---|---|
| | ընթացքում անպայմանորեն հաշվի առնել դրանց տեխնոլոգիականությունը, էսքիզների հիման վրա գծի աշխատանքային գծագրերը տեխնիկական պայմանների առաջադրմամբ և անհրաժեշտ մասնագրերով, պատրաստի զարդային տարրի փորձնական նմուշ,<br>2. կատարի ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն, որոշի արատների տեսակները, չափերը, հեռացնել դրանք հնարավորության սահմաններում, որոշի փայտանյութի խոնավության աստիճանը, կատարի նախապատրաստվածքի չափանշում և կտրում, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>3. կատարի ռելիեֆային փորագրության չափանշման, գծանշման, փորակման գործիքների ընտրություն, կատարի չափանշումներ, գծանշումներ նախապատրաստվածքի վրա, կատարի ռելիեֆային փորագրում էսքիզների և աշխատանքային գծագրերի հիման վրա, օգտվի սևեռակ հարմարանքներից, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>4. կատարի պատրաստված դետալների վերջնամշակման գործընթացները՝ վերջնական չափաբերում, ռելիեֆային մակերևույթների անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ ըստ աշխատանքային գծագրերի: Աշխատանքի ժամանակ օգտվի սևեռակ հարմարանքներից, պահպանի անվտանգության կանոնները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կատարել ռելիեֆային փորագրությամբ դետալների էսքիզներ: Դետալների ռելիեֆային տարրերի նախագծման ընթացքում անպայմանորեն հաշվի առնել դրանց տեխնոլոգիականությունը, էսքիզների հիման վրա գծել աշխատանքային գծագրերը տեխնիկական պայմանների առաջադրմամբ և անհրաժեշտ մասնագրերով, պատրաստել զարդային տարրի փորձնական նմուշ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում է ռելիեֆային փորագրությամբ դետալների էսքիզներ, հաշվի է առնում հատիչ, փորակիչ, գայլիկոնիչ-փորակիչ, հղկման և այլ գործիքներով ու սարքավորումներով այդ տարրերի մշակման և վերջնամշակման աշխատանքները կատարելու հնարավորությունը,<br>2) աշխատանքային էսքիզների վրա ճիշտ է նշում մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջները և |

| | |
|---|---|
| | տեխնիկական պայմանները, կազմում է անհրաժեշտ տեխնիկական մասնագրերը:<br>3) պատրաստում է զարդային տարրի փորձնական նմուշ՝ օգտվելով սևեռող հարմարանքներից և պահպանելով անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրանք է տրվում կատարել ռելիեֆային փորագրությամբ, զարդային տարրեր պարունակող դետալների էսքիզներ և պատրաստել փորձանմուշ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Որպես ռեսուրս պետք է ունենալ ուսումնամեթոդական գրականություն, էսքիզներ և աշխատանքային գծագրեր կատարելու պարագաներ, աշխատանքային գործիքներ և հարմարանքներ, փայտանյութի նախապատրաստվածք: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 10 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն, որոշել արատների տեսակները, չափերը, հեռացնել դրանք հնարավորության սահմաններում, որոշել փայտանյութի խոնավության աստիճանը, կատարել նախապատրաստվածքի չափանշում և կտրում, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է տարբերակում փայտանյութի տեսակները ըստ տեքստուրայի,<br>2) ճիշտ է ընտրում փայտանյութի տեսակը ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստման համար,<br>3) ճիշտ է որոշում փայտանյութի արատների տեսակները և չափերը,<br>4) արատների չափերից կախված ճիշտ է հեռացնում դրանք հնարավորության սահմաններում,<br>5) ճիշտ է որոշում փայտանյութի խոնավության աստիճանը,<br>6) ճիշտ է կատարում նախապատրաստվածքի չափանշումը և կտրումը ձեռքի կամ մեքենայական կտրիչ գործիքներով,<br>7) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրանք է տրվում |

| | |
|---|---|
| | կատարել ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն և կատարել նախապատրաստվածքի չափանշում ու կտրում, պահպանելով անվտանգության կանոնները:<br>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝<br>Փայտանյութի տեսակները:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Որպես ռեսուրս անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական գրականություն, ուսումնական պլակատներ, տարբեր փայտանյութի նմուշներ, խոնավությունը չափող սարքեր, չափիչ, չափանշող գործիքներ, կտրող գործիքներ, սևեռող հարմարանքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 12 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կատարել ռելիեֆային փորագրության չափանշման, գծանշման, փորակման գործիքների ընտրություն, կատարել չափանշումներ, գծանշումներ նախապատրաստվածքի վրա, կատարել ռելիեֆային փորագրում էսքիզների և աշխատանքային գծագրերի հիման վրա, օգտվել սևեռակ հարմարանքներից, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում ռելիեֆային փորագրության չափանշման, գծանշման, փորակման գործիքների ընտրություն,<br>2) ճիշտ է կատարում չափանշումներ և գծանշումներ նախապատրաստվածքի վրա,<br>3) ճիշտ է նախապատրաստում աշխատատեղը ռելիեֆային փորագրության գործընթացների կատարման համար,<br>4) ճիշտ է կատարում ռելիեֆային փորագրման գործընթացները համապատասխան փորակման գործիքներով՝ էսքիզներին և աշխատանքային գծագրերին համապատասխան,<br>5) ճիշտ է օգտվում սևեռակ հարմարանքներից,<br>6) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է նախապատրաստել բանվորական աշխատատեղը ռելիեֆային փորագրության գործընթացներին համապատասխան կերպով: Նախապատրաստվածքի վրա կատարել չափանշում, գծանշում, ռելիեֆային փորագրություն՝ էսքիզների և |

| | |
|---|---|
| | աշխատանքային գծագրի հիման վրա, նախապես ընտրված չափանշման, գծանշման և փորագրման գործիքներով՝ պահպանելով անվտանգության կանոնները:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ էսքիզներ և աշխատանքային գծագրեր, չափանշման, գծանշման գործիքներ, մշակող գործիքներ, սևեռող հարմարանքներ, փայտանյութի նախապատրաստվածքներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 12 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Կատարել պատրաստված դետալների վերջնամշակման գործընթացները՝ վերջնական չափաբերում, ռելիեֆային մակերևույթների անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ ըստ աշխատանքային գծագրերի: Աշխատանքի ժամանակ օգտվել սևեռակ հարմարանքներից, պահպանել անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) աշխատանքային գործիքներով ճիշտ է կատարում պատրաստված դետալների վերջնամշակման աշխատանքները՝ վերջնական չափաբերում, ռելիեֆային մակերևույթների անհարթությունների վերացում, հղկում, ողորկում,<br>2) ճիշտ է կատարում վերջնամշակման աշխատանքները աշխատանքային գծագրերում նշված տեխնիկական պայմաններին, մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջներին համապատասխան,<br>3) ճիշտ է օգտվում սևեռակ հարմարանքներից տեխնոլոգիական գործընթացների կատարման ժամանակ,<br>4) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել պատրաստված դետալի մակերևույթների վերջնամշակման գործընթացները՝ չափաբերում, անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ աշխատանքային գծագրում տեխնիկական պայմանների համաձայն, համապատասխան գործիքների և հղկանյութերի միջոցով՝ պահպանելով անվտանգության կանոնները:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Որպես ռեսուրս անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական գրականություն, էսքիզներ և աշխատանքային գծագրեր, վերջնամշակման գործիքների |

| | |
|---|---|
| | հավաքածու, օժանդակ հարմարանքներ և այլն:: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 12 ժամ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԻՋԱՆՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՍՇՏ-3-13-012 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել և զարգացնել փայտից միջանցիկ փորագրությամբ դետալների պատրաստման կարողություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ<br>տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 46 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՍՇՏ-3-13-005 «Ձեռքի գործիքներով աշխատանքների կատարում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. կատարի միջանցիկ փորագրությամբ դետալների էսքիզներ, տարածական պատկերներ, ապահովի գեղարվեստական հորինվածքի տեխնոլոգիականությունը՝ փորակման, հատման, գայլիկոնման-փորակման, անցքալայնման, հարթեցնման, հղկման և այլ գործիքներով աշխատելիս,<br>2. կատարի միջանցիկ փորագրությամբ դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն, որոշի արատների տեսակները, չափերը, հնարավորության սահմաններում վերացնի դրանք, որոշի փայտանյութի խոնավության աստիճանը, կատարի նախապատրաստվածքի չափանշում և կտրում, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>3. կատարի միջանցիկ փորագրության չափանշման, գծանշման, փորակման,հատման, գայլիկոնման- փորակման, անցքալայնման, հարթեցման, հղկման և այլ գործիքների ընտրություն, կատարել չափանշումներ ու գծանշումներ |

| | |
|---|---|
| | նախապատրաստվածքի վրա, պատրաստել միջանցիկ փորագրությամբ դետալներ, օգտվի սևեռակ հարմարանքներից, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>4. կատարի պատրաստված դետալների վերջնամշակման գործընթացները՝ վերջնական չափաբերում, ներքին ու արտաքին մակերևույթների անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ ըստ աշխատանքային գծագրերի պահանջների: Աշխատանքի ժամանակ օգտվի սևեռող հարմարանքներից, պահպանել անվտանգության կանոնները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կատարել միջանցիկ փորագրությամբ դետալների էսքիզներ, տարածական պատկերներ, ապահովել գեղարվեստական հորինվածքի տեխնոլոգիականությունը՝ փորակման, հատման, գայլիկոնման-փորակման, անցքալայնման, հարթեցման, հղկման և այլ գործիքներով աշխատելիս |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում միջանցիկ փորագրությամբ դետալների էսքիզներ, ապահովում է գեղարվեստական հորինվածքի տեխնոլոգիականությունը,<br>2) ճիշտ է պատրաստում փորձնական նմուշ՝ կատարված գրաֆիկական աշխատանքների հիման վրա,<br>3) ճիշտ է առաջադրում տեխնիկական պայմանները էսքիզների վրա, նշում է մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջները, կազմում է անհրաժեշտ տեխնիկական մասնագրեր: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրանք է տրվում կատարել միջանցիկ փորագրությամբ դետալների էսքիզներ և դրանց հիման վրա պատրաստել փորձնական նմուշ՝ ապահովելով նախապատրաստվածքի հուսալի ամրակայումը սևեռող հարմարանքներով և պահպանելով անվտանգության կանոնները:<br>:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տեխնիկական համապատասխան գրականություն, գծագրական պարագաներ, փայտանյութի նախապատրաստվածք, |

| | |
|---|---|
| | փորագրման գործիքներ, օժանդակ հարմարանքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 10 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել միջանցիկ փորագրությամբ դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն, որոշել արատների տեսակները, չափերը, հնարավորության սահմաններում վերացնել դրանք, որոշել փայտանյութի խոնավության աստիճանը, կատարել նախապատրաստվածքի չափանշում և կտրում, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է տարբերակում փայտանյութի տեսակները ըստ տեքստուրայի,<br>2) ճիշտ է ընտրում փայտանյութի տեսակը միջանցիկ փորագրությամբ դետալների պատրաստման համար,<br>3) ճիշտ է որոշում փայտանյութի արատների տեսակները և չափերը, գործիմացորեն հեռացնում է դրանք հնարավորության սահմաններում,<br>4) ճիշտ է որոշում փայտանյութի խոնավության աստիճանը,<br>5) ճիշտ է կատարում նախապատրաստվածքի չափանշում և կտրում՝ ձեռքի կամ մեքենայական գործիքներով կամ հաստոցներով,<br>6) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվում է առաջադրանք կատարել միջանցիկ փորագրությամբ դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն և կատարել նախապատրաստվածքի չափանշում ու կտրում՝ սևեռող հարմարանքների կիրառմամբ և անվտանգության կանոնների պահպանմամբ:<br>:<br><br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի փայտանյութերի նմուշներ, էսքիզներ, չափման, չափանշման գործիքներ, խոնաչափ սարքեր, օժանդակ |

| | |
|---|---|
| | հարմարանքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 12 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կատարել միջանցիկ փորագրության չափանշման, գծանշման, փորակման,հատման, գայլիկոնման- փորակման, անցքալայնման, հարթեցման, հղկման և այլ գործիքների ընտրություն, կատարել չափանշումներ ու գծանշումներ նախապատրաստվածքի վրա, պատրաստել միջանցիկ փորագրությամբ դետալներ, օգտվել սևեռակ հարմարանքներից, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ընտրում միջանցիկ փորագրության համար անհրաժեշտ փորակման, հատման, գայլիկոնման- փորակման, անցքալայնման, անցքակոկման հարթեցման, հղկման և այլ գործիքները,<br>2) ճիշտ է կատարում չափանշումները, գծանշումները նախապատրաստվածքի վրա,<br>3) ճիշտ է նախապատրաստում աշխատատեղը՝ փորագրման գործընթացների իրականացման համար,<br>4) ճիշտ է կատարում միջանցիկ փորագրման գործընթացները ձեռքի և մեքենայական համապատասխան գործիքներով՝ էսքիզներին և աշխատանքային գծագրերին համապատասխան,<br>5) ճիշտ է օգտվում սևեռակ հարմարանքներից,<br>6) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է նախապատրաստել բանվորական աշխատատեղը միջանցիկ փորագրության գործընթացներին համապատասխան ձևով, ընտրել միջանցիկ փորագրության համար համապատասխան գործիքներ և պատրաստել այդպիսի փորագրությամբ դետալներ՝ պահպանելով անվտանգության կանոնների:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային գծագրեր, էսքիզներ, չափանշման, գծանշման գործիքներ, միջանցիկ փորագրության գործիքների հավաքածու, սևեռող հարմարանքներից և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված** | տեսական ուսուցում՝ 2 ժամ |

| | |
|---|---|
| **ժամաքանակը** | գործնական պարապմունք՝ 12 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 4** | Կատարել պատրաստված դետալների վերջնամշակման գործընթացները՝ վերջնական չափաբերում, ներքին ու արտաքին մակերևույթների անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ ըստ աշխատանքային գծագրերի պահանջների: Աշխատանքի ժամանակ օգտվել սևեռող հարմարանքներից, պահպանել անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում պատրաստված դետալների վերջնամշակման աշխատանքները՝ վերջնական չափաբերում, ներքին ու արտաքին մակերևույթների խորդուբորդությունների վերացում, հղկում, ողորկում,<br>2) վերջնամշակման աշխատանքները ճիշտ է կատարում աշխատանքային գծագրերում նշված մշակման ճշգրտության, մակերևույթների մաքրության պահանջներին ճշտորեն համապատասխան,<br>3) ճիշտ է օգտվում սևեռակ հարմարանքներից՝ տեխնոլոգիական գործընթացների կատարման ժամանակ,<br>4) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել միջանցիկ փորագրությամբ դետալի մակերևույթների վերջնամշակման գործընթացները՝ չափաբերում, անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ աշխատանքային գծագրում նշված տեխնիկական պայմանների համաձայն, համապատասխան գործիքների և հղկանյութերի միջոցով, անվտանգության կանոնների պահպանմամբ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային գծագրեր, էսքիզներ, սևեռող հարմարանքներից , վերջնամշակման գործիքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք 12 ժամ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-013 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել երկրաչափական զարդանախշերից բաղկացած փայտե դետալների պատրաստման կարողություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի |

| | |
|---|---|
| | պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ<br>տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական աշխատանք՝ 44 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՇՏ-3-13-005 «Ձեռքի գործիքներով աշխատանքների կատարում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1. կատարի երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների էսքիզներ, պատրաստի երկրաչափական զարդանախշերի ձևանմուշներ, ապահովի գեղարվեստական հորինվածքի տեխնոլոգիականությունը, պատրաստի աշխատանքային գծագրերը տեխնիկական պայմանների առաջադրմամբ անհրաժեշտ մասնագրերով,<br>2. կատարի երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար պիտանի փայտանյութի ընտրություն, որոշի արատների տեսակները և չափերը, հնարավորության սահմաններում նախապատրաստվածքը մաքրի արատներից, որոշի փայտանյութի խոնավության աստիճանը, կատարի նախապատրաստվածքի չափանշում և կտրում, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>3. կատարի երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար անհրաժեշտ փորակման, հատման, նրբասղոցման, գայլիկոնման- փորակման, անցքալայնման, հարթեցման, կոկման, հղկման և այլ գործիքների ընտրություն, կատարի չափանշումներ ու գծանշումներ նախապատրաստվածքի վրա, պատրաստի երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալներ՝ օգտվի ձևանմուշներից, կիրառի սևեռող հարմարանքներ, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>4. կատարի պատրաստված դետալների վերջնամշակման գործընթացները՝ վերջնական չափաբերում, երկրաչափական մակերևույթների անհարթությունների վերացում, կոկում, հղկում, ողորկում ըստ աշխատանքային գծագրերի: Աշխատանքի ժամանակ օգտվի սևեռակ հարմարանքներից, պահպանել անվտանգության կանոնները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 1** | Կատարել երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների էսքիզներ, պատրաստել երկրաչափական զարդանախշերի ձևանմուշներ, ապահովել գեղարվեստական հորինվածքի տեխնոլոգիականությունը, պատրաստել աշխատանքային գծագրերը տեխնիկական պայմանների առաջադրմամբ ևանհրաժեշտ մասնագրերով |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների էսքիզներ, պատրաստում է երկրաչափական զարդանախշերի ձևանմուշներ, կարողանում է ապահովել գեղարվեստական հորինվածքի տեխնոլոգիականությունը,<br>2) էսքիզների վրա ճիշտ է առաջադրում տեխնիկական պայմանները, նշում է մշակման ճշգտության և մակերևույթների մաքրության պահանջները, կազմում է անհրաժեշտ տեխնիկական մասնագրերը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրանք է տրվում կատարել երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների էսքիզներ՝ հաշվի առնելով երկրաչափական զարդային տարրերի դյուրամշակելիությունը փայտանյութի վրա դրանց վերարտադրման ժամանակ՝ ձեռքի և մեքենայական մշակող գործիքներով, պատրաստել ձևանմուշներ և աշխատանքային գծագիր:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան տեխնիկական գրականություն, գծագրական գործիքներ և պարագաներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում 4 ժամ:<br>գործնական պարապմունք 10 ժամ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Կատարել երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար պիտանի փայտանյութի ընտրություն, որոշել արատների տեսակները և չափերը, հնարավորության սահմաններում նախապատրաստվածքը մաքրել արատներից, որոշել փայտանյութի խոնավության աստիճանը, կատարել նախապատրաստվածքի չափանշում և կտրում, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է տարբերակում փայտանյութի տեսակը ըստ տեքստուրայի,<br>2) ճիշտ է ընտրում փայտանյութի տեսակը երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար, |

| | |
|---|---|
| | 3) ճիշտ է որոշում փայտանյութի արատների տեսակները և չափերը, հնարավորության սահմաններում վերացնում է դրանք,<br>4) ճիշտ է որոշում փայտանյութի խոնավության աստիճանը,<br>5) ճիշտ է կատարում նախապատրաստվածքի չափանշում և կտրում՝ համապատասխան կտրիչ գործիքներով կամ հաստոցներով, օգտվում է ամրակման հարմարանքներից,<br>6) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին տրվում է առաջադրանք կատարել երկրաչափական զարդանախերից բաղկացած դետալների պատրաստման համար համապատասխան փայտանյութի ընտրություն, նախապատրաստվածքի չափանշում ու կտրում՝ սևեռող հարմարանքների կիրառմամբ և անվտանգության կանոնների պահպանմամբ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի փայտանյութերի նմուշներ, չափանշման, գծանշման, խոնավության որոշման անհրաժեշտ գործիքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 10 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կատարել երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար անհրաժեշտ փորակման, հատման, նրբասղոցման, գայլիկոնման- փորակման, անցքալայնման, հարթեցման, կոկման, հղկման և այլ գործիքների ընտրություն, կատարել չափանշումներ ու գծանշումներ նախապատրաստվածքի վրա, պատրաստել երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալներ՝ օգտվել ձևանմուշներից, կիրառել սևեռող հարմարանքներ, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար անհրաժեշտ ձեռքի և մեքենայական գործիքները,<br>2) կատարում նախապատրաստվածքի վրա չափանշումներ ու գծանշումներ,<br>3) ճիշտ է նախապատրաստում աշխատատեղը՝ տեխնոլոգիական գործընթացների ռացիոնալ կատարման համար,<br>4) ճիշտ է կատարում տեխնոլոգիական գործընթացները ձեռքի և մեքենայական համապատասխան գործիքներով՝ ըստ |

| | |
|---|---|
| | էսքիզների և աշխատանքային գծագրերի պահանջների, օգտվում է սևեռող հարմարանքներից,<br>5) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է նախապատրաստել բանվորական աշխատատեղը երկրաչափական զարդանախշեր պարունակող դետալների մշակման համար, ընտրել երկրաչափական զարդանախշերից բաղկացած դետալների պատրաստման համար գործիքներ և պատրաստել այդպիսի դետալներ՝ օգտվելով ձևանմուշներից՝ սևեռող հարմարանքների օգնությամբ և անվտանգության կանոնների պահպանմամբ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի փայտանյութերի նմուշներ, չափանշման, գծանշման, խոնավության որոշման անհրաժեշտ գործիքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 12 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Կատարել պատրաստված դետալների վերջնամշակման գործընթացները՝ վերջնական չափաբերում, երկրաչափական մակերևույթների անհարթությունների վերացում, կոկում, հղկում, ողորկում ըստ աշխատանքային գծագրերի: Աշխատանքի ժամանակ օգտվել սևեռակ հարմարանքներից, պահպանել անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում պատրաստված դետալների վերջնամշակման աշխատանքները՝ վերջնական չափաբերում, երկրաչափական մակերևույթների խորդուբորդությունների վերացում, հղկում, կոկում, ողորկում,<br>2) ճիշտ է կատարում վերջնամշակման աշխատանքները աշխատանքային գծագրերում նշված մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջներին ճշտորեն համապատասխան,<br>3) ճիշտ է օգտվում սևեռակ հարմարանքներից տեխնոլոգիական գործընթացների կատարման ժամանակ,<br>4) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել պատրաստված դետալների մակերևույթների վերջնամշակման գործընթացները՝ չափաբերում, |

| | |
|---|---|
| | անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ աշխատանքային գծագրում նշված տեխնիկական պայմանների համաձայն, վերջնամշակման համապատասխան գործիքների և հղկանյութերի միջոցով՝ սևեռող հարմարանքների կիրառում և անվտանգության կանոնների պահպանում:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի փայտանյութերի նմուշներ, չափանշման, գծանշման, խոնավության որոշման անհրաժեշտ գործիքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 12 ժամ |

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍԻՆԹԵՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԴԵՏԱԼՆԵՐԻ ՎՐԱ ՓՈՐԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ»**

| | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ՓԱՄՇՏ-3-13-014 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել սինթետիկ նյութերից պատրաստված դետալների վրա փորագրման աշխատանքներ կատարելու կարողություններ:<br>Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել կահույքի զարդային տարրերի պատրաստման աշխատանքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ<br>տեսական ուսուցում՝ 8 ժամ<br>գործնական աշխատանք՝ 10 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՓԱՄՇՏ-3-13-011 «Ռելիեֆային փորագրությամբ դետալների պատրաստում» մոդուլը: |
| **Ուսումնառության արդյունքները** | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.<br>1.կատարի սինթետիկ նյութերից պատրաստված դետալների վրա փորագրությունների էսքիզներ: Փորագրությունների գեղարվեստական հորինվածքի մշակման ժամանակ հաշվի առնի դրանց պատրաստման տեխնոլոգիականությունը , պատրաստի ձևանմուշներ, պատրաստի աշխատանքային գծագրերը՝ տեխնիկական |

| | |
|---|---|
| | պայմանների առաջադրմամբ և անհրաժեշտ տեխնիկական մասնագրերով,<br>2. կատարի դետալների պատրաստման և դրանց վրա փորագրման համար համապատասխան սինթետիկ նյութերի (վոլոկնիտ, տեքստոիտ, պենոպոլիուրիթեան, պոլիստիրոլ, ապակետեքստոլիտ, փայտաշերտավոր պլաստկ (ДСП), լիգոստոն և այլն) ընտրություն,<br>3. կատարի սինթետիկ նյութի վրա փորագրության համար չափանշման, գծանշման, փորակման, վերջնամշակման գործիքների ընտրություն, կատարի չափանշում ու գծանշում նախապատրաստվածքի վրա, կատարի փորագրում աշխատանքային գծագրերի հիման վրա, օգտվի սևեռակ հարմարանքներից, պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,<br>4. կատարի վերջնամշակման գործընթացները (վերջնական չափաբերում, հարթ և ձևավոր մակերևույթների խորդուբորդությունների վերացում, կոկում, հղկում, ողորկում) ըստ աշխատանքային գծագրերում նշված մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջների: Աշխատանքի ժամանակ օգտվի սևեռակ հարմարանքներից, պահպանի անվտանգության տեխնիկայի կանոնները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Կատարել սինթետիկ նյութերից պատրաստված դետալների վրա փորագրությունների էսքիզներ: Փորագրությունների գեղարվեստական հորինվածքի մշակման ժամանակ հաշվի առնել դրանց պատրաստման տեխնոլոգիականությունը , պատրաստել ձևանմուշներ, պատրաստել աշխատանքային գծագրերը՝ տեխնիկական պայմանների առաջադրմամբ և անհրաժեշտ տեխնիկական մասնագրերով |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում սինթետիկ նյութերից պատրաստված դետալների վրա կատարվող փորագրությունների էսքիզներ, պատրաստում է ձևանմուշներ, փորագրությունների գեղարվեստական հորինվածքը մշակելիս հաշվի է առնում դրանց տեխնոլոգիականությունը և իրականացման հնարավորությունը,<br>2) ճիշտ է պատրաստում փործնական նմուշներ Էսքիզների հիման վրա,<br>3) աշխատանքային էսքիզերի վրա ճիշտ է առաջադրում սինթետիկ նյութերի վրա փորագրության տեխնիկական պայմանները, նշում է մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջները, կազմում է անհրաժեշտ |

| | |
|---|---|
| | տեխնիկական մասնագրերը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել սինթետիկ նյութերից պատրաստված դետալների վրա փորագրությունների էսքիզներ և պատրաստել ձևանմուշներ:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ սինթետիկ նյութերից նախապատրաստվածքեր, էսքիզներ կատարելու համար գծագրական գործիքներ և պարագաներ: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 2 ժամ |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել դետալների պատրաստման և դրանց վրա փորագրման համար համապատասխան սինթետիկ նյութերի (վոլոկնիտ, տեքստոիտ, պենոպոլիուրիեթան, պոլիստիրոլ, ապակետեքստոլիտ, փայտաշերտավոր պլաստ (ДСП), լիգոստոն և այլն) ընտրություն |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է տարբերակում զանազան սինթետիկ նյութերի մեխանիկական հատկությունները, փորագրության իրականացման առումով դրանց դյուրամշակելիությունը և նպատակահարմարությունը,<br>2) ճիշտ է ընտրում ըստ նշանակության և փորագրության համար առավել նպատակահարմար սինթետիկ նյութի տեսակը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով:<br>Ուսանողին առաջադրվում է կատարել դետալների պատրաստման և դևանց վրա փորագրման համար համապատասխան սինթետիկ նյութերի ընտրություն:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր սինթետիկ նյութերի նմուշներ, մասնագիտական գրականություն, էսքիզներ, համպատասխան մշակման գործիքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված** | տեսական ուսուցում՝ 2 ժամ |

| | |
|---|---|
| **Ժամաքանակը** | գործնական պարապմունք՝ 2 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 3** | Կատարել սինթետիկ նյութի վրա փորագրության համար չափանշման, գծանշման, փորակման, վերջնամշակման գործիքների ընտրություն, կատարել չափանշում ու գծանշում նախապատրաստվածքի վրա, կատարել փորագրում աշխատանքային գծագրերի հիման վրա, օգտվել սևեռակ հարմարանքներից, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում սինթետիկ նյութի վրա փորագրության համար աշխատանքային գործիքների ընտրությունը,<br>2) ճիշտ է կատարում չափանշումները և գծանշումները նախապատրաստվածքի վրա,<br>3) ճիշտ է նախապատրաստում աշխատատեղը՝ սինթետիկ նյութերից պատրաստված դետալի վրա փորագրության իրականացման համար,<br>4) ճիշտ է կատարում փորագրությունը համապատասխան փորակման գործիքներով՝ էսքիզների և աշխատանքային գծագրերի պահանջներին և ձևանմուշին համապատասխան,<br>5) ճիշտ է օգտվում սևեռակ հարմարանքներից փորակման գործընթացների համար,<br>6) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է ընտրել սինթետիկ նյութերի փորագրություն կատարելու համար աշխատանքային մշակող գործիքներ և սինթետիկ նյութի նախապատրաստվածքի վրա կատարել փորագրություն՝ պահպանելով անվտանգության կանոնները:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի սինթետիկ նյութեր, էսքիզներ, ձևանմուշներ, չափանշման, գծանշման գործիքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 4 ժամ |
| **Ուսումնառության արդյունք 4** | Կատարել վերջնամշակման գործընթացները ( վերջնական չափաբերում, հարթ և ձևավոր մակերևույթների խորդուբորդությունների վերացում, կոկում, հղկում, ողորկում) ըստ աշխատանքային գծագրերում նշված մշակման ճշգրտության և մակերևույթների մաքրության պահանջների: Աշխատանքի ժամանակ օգտվել սևեռակ |

| | |
|---|---|
| | հարմարանքներից, պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները: |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է կատարում վերջնամշակման աշխատանքները՝ ձեռքի և մեքենայական համապատասխան գործիքներով,<br>2) վերջնամշակման աշխատանքները ճիշտ է կատարում է աշխատանքային գծագրերում կամ էսքիզնորում նշված մշակման ճշտության և մակերևույթների մաքրության պահանջներին համապատասխան, օգտվում է տեխնիկական մասնագրերից.<br>3) ճիշտ է կիրառում սևեռակ հարմարանքներ փորագրման գործընթացների ժամանակ,<br>4) պահպանում է անվտանգության կանոնները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է կատարել սինթետիկ նյութերից պատրաստված դետալների մակերևույթների վերջնամշակման գործընթացները՝ չափաբերում, անհարթությունների վերացում, հղկում, ողորկում՝ աշխատանքային գծագրում նշված տեխնիկական պայմանների համաձայն՝ վերջնամշակման համապատասխան գործիքների և հղկանյութերի միջոցով:<br>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային գծագրեր, էսքիզներ, փորագրման գործիքներ, սևեռող հարմարանքներ և այլն: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 2 ժամ<br>գործնական պարապմունք՝ 2 ժամ |